ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 86

ք. Արտաշատ

«25» 08 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի ԹԻՎ 11 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Արարատի ներմարզային՝ <<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային և <<Արտաշատ-Հովտաշեն>> թիվ 02-012 միկրոավտոբուսային երթուղիներում տրանսպորտային միջոցների փոփոխություն կատարելու մասին ՀՀ Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 20-ի թիվ 11 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2014թ. օգոստոսի 25
թիվ 85 որոշման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 11

2014թ. օգոստոսի 20-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Ա. Արամյանը, Մ. Թադևոսյանը

Օրակարգ

<<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային և <<Արտաշատ-Հովտաշեն>> թիվ 02-012 միկրոավտոբուսային երթուղիներում տրանսպորտային միջոցների փոխարինման մասին:

Լսեցին- <<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային և <<Արտաշատ-Հովտաշեն>> թիվ 02-012 միկրոավտոբուսային երթուղիներում տրանսպորտային միջոցների փոխարինման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Զեկուցողը ներկայացրեց, որ <<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման համար ներկայացվել էր ՊԱԶ-32053 մակնիշի 138ԼԼ26 պետհամարանիշով մեքենա, սակայն գնահատման է ներկայացվել միջմարզային երթուղում աշխատող 2302Լ դեղին հիմնագույնի համարանիշով մեքենա, որի պատշառով մեքենան չի գնահատվել:

Արտահայտվեցին- Ա. Պողոսյանը, Ա. Հակոբյանը, Ա. Արամյանը

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով, հիմք տրանսպորտային միջոցի գնահատման ամփոփ թերթիկ՝

Որոշեցին

<<Արտաշատ-Վեդի>> թիվ 02-002 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինումը մերժել, իսկ <<Արտաշատ-Հովտաշեն>> թիվ 02-012 միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ-32213 մակնիշի 0041Լ /649SU25/ պետհամարանիշի միկրոավտոբուսը փոխարինել ԳԱԶ-32213 մակնիշի 591OP61 պետհամարանիշի միկրոավտոբուսով:

Նախագահ	Ա Մուրադյան	/ստորագրություն/
Տեղակալ	Ա.Պողոսյան	/ստորագրություն/
Քարտուղար	Ա.Հակոբյան	/ստորագրություն/
Անդամներ	Ա. Արամյան	/ստորագրություն/
	Մ. Թադևոսյան	/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 87

<< 25 >> << 08 >> 2014թ.

ք. Արտաշատ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014թվականի օգոստոսի 22-ի N 780-Ա որոշումը՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի Մասիսի սոցիալական ծառայության տարածքային գործակալության գլխավոր մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր 62-3.2-38, 62-3.2-39) անձնագրերը՝ համաձայն հավելվածների NN 1-2 :

2. Մասիսի սոցիալական ծառայության տարածքային գործակալության գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-3.2-19) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Գործակալության գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության պետը կամ Գործակալության գլխավոր մասնագետներից մեկը:

Գործակալության գլխավոր մասնագետ-գլխավոր հաշվապահը Գործակալության պետի, Գործակալության գլխավոր մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>.

3. Գլխավոր մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 62-3.2-(20-21)) անձնագրերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Գործակալության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության պետը կամ Գործակալության գլխավոր մասնագետ- գլխավոր հաշվապահը կամ Գործակալության գլխավոր մասնագետներից մեկը:

Գործակալության գլխավոր մասնագետ մասնագետը Գործակալության պետի, Գործակալության գլխավոր մասնագետ- գլխավոր հաշվապահի, Գործակալության գլխավոր մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>.

4. Առաջատար մասնագետ-ավագ տեսուչի փախստականների գծով քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-4.1-15) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Գործակալության առաջատար մասնագետ-ավագ տեսուչի փախստականների գծով բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության առաջատար մասնագետ-տեսուչներից մեկը:

Գործակալության առաջատար մասնագետ-ավագ տեսուչը փախստականների գծով Գործակալության առաջատար մասնագետ-տեսուչներից մեկի, Գործակալության առաջին կարգի մասնագետ-տեսուչի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>.

5. Առաջատար մասնագետ-տեսուչների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 62-4.1-16, 62-4.1-18) անձնագրերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Գործակալության առաջատար մասնագետ-տեսուչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության առաջատար մասնագետ-ավագ տեսուչը փախստականների գծով կամ Գործակալության մյուս առաջատար մասնագետ-տեսուչը:

Գործակալության առաջատար մասնագետ-տեսուչը է Գործակալության առաջատար մասնագետ-ավագ տեսուչի փախստականների գծով, Գործակալության մյուս առաջատար մասնագետ-տեսուչի, Գործակալության առաջին կարգի մասնագետ-տեսուչի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>.

6. Առաջին կարգի մասնագետ-տեսուչի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-4.3-7) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ .

<<5. Գործակալության առաջին կարգի մասնագետ-տեսուչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության առաջատար մասնագետ-ավագ տեսուչը փախստականների գծով կամ Գործակալության առաջատար մասնագետ-տեսուչներից մեկը:>>:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ